

խուլք: Եւ այսպէս Մելքոն Քասպասեան Արքեպ. Յովհ. Վ. Նիկոմիդացի (Բրորականտայի աշակերտ, միսինար եւ գրագէտ), Յովհ. Վ. Պէշիկթաշցի եւ Աստուածատուր Վ. Պարսկաստանցի իրենց թագստոցէն ելան յօժարակամ գացին Բ. Գուռը, ուր Եպարքոսը ձեւական հարցումներէ ետեւ՝ ամէնը մէկտեղ շղթայակապ նետել տուաւ նաւարան, որոնց յետոյ ընկերացաւ նաեւ Յովհ. Եպիսկոպոս:

Պոլսոյ գլխաւոր նաւարանը կը գտնուէր, ինչպէս ցայսօր, Կասրմ փաշայի ծովեզերքը: Մահապարտ գերիներն ու յանցաւորները կը նետէին կամ թիարան (քիւրէկ, les galères), ուր ցմահ թի պիտի քաշէին պատերազմական եւ պետական նաւակներու մէջ, եւ կամ աւելի սաստիկ նաւարան (թէրսխանէ, le bagne), ուր արդէն իբրեւ մահապարտ շղթայակապ վիճակի մէջ, անխնայ հարուածներու տակ եւ տառապանաց մէջ կ'աշխատեցընէին նաւաշինութեանց, իսկ գիշերները կը նետէին նկուղներ: Ասկէ ազատիլ կարելի էր միայն մահամետականալով, կամ ծանր դրամով՝ արձակման թագաւորական գիր հանել տալով, եւ կամ մահուամբ:

Այս միջոցին Աբրահամ՝ հայ կաթողիկէ Արքեպ. ն Բերիոյ (Հալէպ), ի Փոքր Ասիա առաքելական ուղեւորութիւններ կատարելէն ետեւ՝ Տրապիզոն հաստատուած, տեղւոյն Առաջնորդութիւնը ձեռք բերած էր եւ ժողովրդեան մէջ կաթողիկէ հաւատքը կը տարածէր: Իր պաշտպանն՝ Աիւմիւլխանացի Խօճա Պաղտասար, որ